

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱՔՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԵՎՈՆ ԳԱՌՆԻԿԻ**

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ  
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ**

ԺԳ.00.01 - «Մանկավարժության տեսություն և պատմություն»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր**

**Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:**

Գիտական ղեկավար՝	Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր <b>Հ. Հ. Պետրոսյան</b>
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Մանկավարժական գիտությունների դոկտոր <b>Ա. Վ. Աբրահամյան</b>  Մանկավարժական գիտությունների թեկնածու <b>Բ. Լ. Երիցյան</b>
Առաջատար կազմակերպություն՝	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ. փետրվարի 12-ին ժամը 12<sup>00</sup>-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ.-ի հունվարի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
մանկավարժական գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա.Հ.Սվաջյան

## ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Կրթության բարեփոխումները ուղղված են կրթության հումանացմանն ու ժողովրդավարացմանը, կրթության անձնակողմնորոշիչ ուղղվածության ձևավորմանն ու անձնական և հասարակական շահերին, անձի հոգեֆիզիկական և բարոյական հոգևոր հատկությունների զուգակցման արդյունավետությանը: Կրթության զարգացման իրական գործընթացները տեղի են ունենում հասարակության սոցիալ-տնտեսական գործընթացների և պետական հասարակարգի քաղաքական համակարգի արմատական փոփոխությունների հետ միաժամանակ:

Կրթության վերակազմակերպման ռազմավարությունն ուղղված է համընդհանուր, միևնույն բովանդակությամբ ուսումնական ծրագրերի և դասագրքերի դեմ: Այդ քայլերը սկսվեցին երկրի համար ծանր շրջանում, ինչը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցող արմատական փոփոխություններով, հասարակության ամբողջական փոխակերպմամբ, որոնք իրենց հերթին սաստկացան գլոբալ և տարածաշրջանային գործընթացներով, ազգամիջյան հարաբերությունների սրացմամբ, բնակչության սոցիալ-կենցաղային պայմանների վատթարացմամբ, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հիվանդացման մակարդակի աճով, երիտասարդների կողմից կատարվող հանցագործությունների, ոգելից խմիչքների և թմրանյութերի օգտագործման աճով: Նշված և մի շարք այլ հանգամանքներ դարձան ընդհանուր դաստիարակության գործընթացի և ըստ բովանդակության նրա առանձին բաղադրիչների, այդ թվում ֆիզիկական դաստիարակության, մասնավորապես նաև «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի արդիականացման հրամայական:

Այս անենը հաշվի առնվեցին Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի օրենսդրության, «Ֆիզիկական կուլտուրայի մասին» օրենքի, հանրակրթության պետական չափորոշիչի, մասնագիտական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների և այլ նորմատիվ ակտերի մշակման գործընթացում:

Պարտադիր պայման է հանդիսանում միայն պետական կրթական չափորոշիչի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի պահանջների կատարումը:

Մասնագիտական գրականության մեջ քննարկվում են ֆիզիկական դաստիարակության արդիականացման այլընտրանքային հայեցակարգեր: Կրթության կառավարման մարմինների կողմից երաշխավորվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսումնական ծրագրերի տարբերակներ: Այս փոփոխությունները իրականանում են միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ֆիզիկական վարժությունների պարապմունքների պատմականորեն ձևավորված տեսակի մասնակի կորուստի պայմաններում: Ավելին՝ ֆիզիկական կուլտուրայի արտադասարանական պարապմունքները զրկվել են համապատասխան նյութական և բարոյական աջակցությունից, ինչի պատճառով ընդհանրապես չեն իրականացվում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Պետության սոցիալ-տնտեսական և քաղաքական կողմնորոշման վերակազմակերպման պայմաններում ֆիզիկական դաստիարակության և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի կարգավիճակը միջին մասնագիտական կրթության բովանդակության ներքո ամրապնդվում է, դառնում սոցիալապես ավելի ուղղորդված, քան նախկինում: Ֆիզիկական կուլտուրան երևի թե՛ երիտասարդության համար միակ մատչելի և գործող միջոցն է, որի շնորհիվ հնարավոր է սեփական մարմնի մորֆոգործառնական զարգացման թերությունների շտկումը, անձի հասարակական կարգավիճակի և հեղինակության ամրապնդումը, հոգեֆիզիկական ունակությունների ներդաշնակումը, սոցիալական պաշտպանվածության ապահովումը, ինքնադաստիարակումը, վստահության ձևավորումը և այլն: Մինչդեռ ֆիզիկական դաստիարակության կրթադաստիարակչական գործընթացը դարձյալ չի համապատասխանում անձի, հասարակության և պետության պահանջներին: Վերջին 15-20 տարիների ընթացքում սոցիալական պատվերը այս ոլորտում իրականացվում է ոչ լիովին: Ֆիզիկական դաստիարակության արդյունավետության, ոլորտում բարեփոխումների ուղղությունների, մանկավարժական տեխնոլոգիաների մշակման ուղղությամբ իրականացվել են լուրջ հետազոտություններ Վ. Կ. Բալսևիչի, Վ. Վ. Բելինովիչի, Մ. Մ. Բոգենի, Մ. Ա. Վիլինսկու և Ե. Ն. Լիտվինովի, Լ. Վ. Վոլկովայի, Յու. Դ. Ժելեզնյակի, Պ. Կ. Պետրովի, Ջ. Ի. Կուզնեցովայի, Ն. Ֆ. Կուլինկոյի, Ե. Ն. Լիտվինովայի, Ֆ. Ջ. Մեյերսոնի, Ս. Դ. Նևերկովիչի, Ա. Ա. Տեր-Հովհաննիսյանի և այլոց կողմից: Սակայն նրանց աշխատանքները հիմնականում առնչվում են հանրակրթության ոլորտին: Առաջինի բացակայության պատճառով երկրորդը ստիպված է հիմնվել կրթության այլ բովանդակություն ունեցող, այլ ուսուցման նպատակներ հետապնդող դիդակտիկ գործընթացների վրա: Տվյալ հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի տեսական և մեթոդաբանական դրույթներում դեռևս ֆիզիկական կուլտուրա դասավանդողի համար բավականաչափ կոնկրետ չի ներկայացված նրա գիտական և մեթոդական հիմքերը, որոնց բացակայությունը լուրջ խոչընդոտ է համակարգված ուսումնադաստիարակչական գործընթացի ձևավորման համար:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ֆիզիկական դաստիարակության գիտական հիմքերի պրոբլեմները երկար ժամանակ չեն հարթեցվել և չեն հետազոտվել պատշաճ մակարդակով, չեն մշակվել կրթության արդի հարացույցներին համապատասխան ուսուցման նոր տեխնոլոգիաներ: Առարկայի ուսումնական գործընթացի ցածր արդյունավետությունը հատուցվում էր ֆիզիկական վարժություններով զբաղվելու բազմաթիվ տեսակներով, պետության ուշադրությամբ դպրոցի տվյալ տեսանկյան գործունեությանը և այլն: Տվյալ տիպի հետազոտությունների արդիականությունը աճում է՝ կախված այն փաստից, որ ֆիզիկական կուլտուրան չունի սեփական տեխնոլոգիա և մեթոդիկա, նրա դիդակտիկ հիմքերը մինչ օրս չեն մշակվել, իսկ գիտական դրույթների պահանջարկը, որոնք կարտացոլեն ֆիզիկական կուլտուրայի առանձնահատկությունները, արդիական է:

Միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ուսումնական պլանների և մասնագիտական գրականության հետազոտությունները ցույց են տալիս, որ շարժողական կարողությունների և հմտությունների, դրանց վեգետատիվ բաղադրիչների ձևավորվածության և դրա հետ մեկտեղ ֆիզիկական բեռնվա-

ծության միջոցով առողջության ամրապնդման հասնելու համար պահանջվում է ավելի շատ ժամանակ, քան նախատեսված է ուսումնական պլաններով:

Այս խնդիրների լուծմամբ և դրա բացառիկ գործնական կարևորությամբ է պայմանավորված տվյալ հետազոտության թեմայի արդիականությունը և հրատապությունը:

**Հետազոտության նպատակը** միջին մասնագիտական կրթության համակարգում ուսանողների ֆիզիկական դաստիարակության և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի կրթադաստիարակչական գործընթացի դիդակտիկ համակարգի տեխնոլոգիականության գիտամեթոդական դրույթների մշակումն է, ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացի օպտիմալացման և արդյունավետության բարձրացման գործում մանկավարժական տեխնոլոգիաների դերի բացահայտումը:

**Հետազոտության օբյեկտը** միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացն է:

**Հետազոտության առարկան** միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների ֆիզիկական դաստիարակության մանկավարժական տեխնոլոգիաներն են:

**Հետազոտության գիտական վարկածը** այն ենթադրությունն է, որ եթե միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում Ֆիզիկական դաստիարակությունը և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացը կազմակերպվի որպես տեխնոլոգիական գործընթաց՝

- բացահայտվեն միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրները՝ հաշվի առնելով կրթության մակարդակը ներկայացնող պահանջները, նախագծվի ուսանողների ֆիզիկական դաստիարակության տեխնոլոգիա՝ պլանավորման, վերջնարդյունքների կանխատեսման, նախապատրաստման, իրականացման, արդյունքների արժևորման ու գնահատման փուլերով,
- մանկավարժական տեխնոլոգիայում հստակեցված լինեն ուսանողների ֆիզիկական դաստիարակության վրա ազդող հիմնական գործոններն ու պայմանները, մշակվեն ուսանողների մոտ ֆիզիկական կուլտուրայի ձևավորվածության բացահայտման չափանիշներ,
- մանկավարժական գործընթացում արդյունավետ կիրառվեն ակտիվ մեթոդներ, ապա կբարձրանա ֆիզիկական դաստիարակության գործընթացի արդյունավետությունը, կստեղծվեն պայմաններ ուսանողների առողջության պահպանման ու ամրապնդման համար, հնարավոր կդառնա վեր հանել ֆիզիկական դաստիարակության գործընթացի թույլ կողմերն ու բացթողումները, իրականացնել մանկավարժական շտկում:

Ելնելով հետազոտության նպատակից և գիտական վարկածից՝ աշխատանքում լուծել ենք հետևյալ **հիմնական խնդիրները**.

1. ուսումնասիրել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող երիտասարդության ֆիզիկական դաստիարակության ժամանակակից մոտեցումների, մանկավարժական տեխնոլոգիաների և դրանք ֆիզիկական դաստիարակության ոլորտում կիրառելու վերաբերյալ

- գիտամեթոդական գրականությունը և տեսությունները, ուսանողների ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրը, սկզբունքները, մանկավարժական գործընթացները, մանկավարժական-կազմակերպչական մոդելները,
2. վերլուծել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների ֆիզիկական դաստիարակության ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաները՝ հաշվի առնելով տարիքային, հոգեբանական ու անհատական առանձնահատկությունները, նախագծել ուսուցման գործընթացի մանկավարժական տեխնոլոգիայի փուլերը, բացահայտել ուսանողների ֆիզիկական դաստիարակության վրա ազդող հիմնական գործոններն ու պայմանները,
  3. մշակել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի յուրահատուկ գործառնությունները, նպատակները և կրթության բովանդակությունը արդյունավետ արտացոլող դիդակտիկ գործընթացների մոդել, մանկավարժական տեխնոլոգիաների կիրառմամբ ֆիզիկական դաստիարակության գործընթացի մանկավարժական-կազմակերպչական այլընտրանքային մոդել,
  4. ցույց տալ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում առաջարկվող մանկավարժական-կազմակերպչական այլընտրանքային մոդելի, մանկավարժական տեխնոլոգիական գործընթացների միջոցով ուսանողների առողջության ամրապնդման, ֆիզիկական ներդաշնակ զարգացման, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման, բարոյականային որակների դաստիարակման, ֆիզիկական պատրաստականության և բարձր աշխատունակության ապահովման գործընթացների արդյունավետությունը:

#### **Հետազոտության մեթոդաբանական հիմքը:**

Հետազոտությունը կատարված է կրթության հիմնարարացման, ժողովրդավարացման, անհատականացման և հումանիզացման հիման վրա մշակված ժամանակակից կրթական ուղղընթացներին և հարացույցներին համապատասխան: Հետազոտությունների համար մեթոդաբանական հիմք են հանդիսացել կրթական և ուսուցման տեխնոլոգիաների տեսությունը (Վ.Պ. Բեսպալկո, Վ.Կ. Բալսևիչի, Հ.Հ. Պետրոսյան), մանկավարժական հետազոտությունների (Վ.Վ. Կրասևիկի) և ֆիզիկական պատրաստվածության մակարդակի հետազոտության մեթոդաբանությունը (Ե.Պ. Բոյկով, Վ.Պ. Գուբա, Մ.Ի. Սոմյոնով), ֆիզիկական կուլտուրայի տեսությունն ու մեթոդիկան (Վ.Պ Արտեմև, Տ. Լու. Կուրցեվիյա, Յու.Ֆ. Կուրամշին, Ա.Ս. Մաքսիմենկո, Լ.Պ. Մատվեն, Գ.Ղ. Խարաբուզի), առողջության և հոգեֆիզիկական վիճակի հանալիր գնահատման տեսությունը (Բ.Խ. Լանդա, Օ.Գ. Բերեստնեռա, Լ.Ի. Իվանկինա, Կ.Ա. Շարոպին), ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության կատարելագործման վերաբերյալ տեսությունները Վ.Կ. Բալսևիչի, Վ.Ֆ. Կոստյուչենկո, Մ.Ի. Սեմյոնով):

#### **Հետազոտության մեթոդները.**

Ատենախոսության հիմնախնդրի լուծման նպատակով հետազոտության ընթացքում օգտագործվել են մի շարք տեսական և գործնական մեթոդներ.

1. տեսական հետազոտության մեթոդներ՝
  - ժամանակակից մանկավարժական, հոգեբանական, գիտամեթոդական և ուսումնամեթոդական աղբյուրների, տեսությունների վերլուծություն,

համադրում և ընդհանրացում, մանկավարժական գործընթացների նախագծում, մոդելավորում,

- պատմահամեմատական վերլուծության մեթոդներ՝ կապված վերացականից կոնկրետի անցման և ուսումնասիրվող երևույթների պատճառահետևողական վերլուծության, ֆիզիկական մշակույթի դաստիարակության տեսական դրույթների մոդելավորման, վերահսկողական փորձաքննությունների:

2. Էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝

- դիտում, անկետավորում, թեստավորում, հարցազրույց, դրանց վերլուծություն, համեմատություն, համադրություն և նմանադրություն, ընդհանրացում, մանկավարժական գիտափորձ՝ հաստատող, ձևավորող և ամփոփող փուլերով, արդյունքների վերլուծության մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ,
- ֆիզիկական կուլտուրայի դասավանդող մասնագետների աշխատանքային փորձի ուսումնասիրում և ընդհանրացում, քրոնոմետրաժ:
- ֆիզիկական մշակույթի դաստիարակության գործընթացի, այդ ուղղությամբ ուսումնառողների գործունեության և ինքնուրույն աշխատանքի վերլուծություն:

3. առնչվող բժշկականաբանական գիտությունների մեթոդներ՝

- ֆիզիկական զարգացվածության հիմնական ցուցանիշների մարդաբանական չափումների,
- շարժման առանձին պարամետրերի կառավարման ունակությունների չափումների:

Ըստ հետազոտությունների նպատակների՝ վերոնշյալ մեթոդների օգնությամբ իրականացվել են մանկավարժական գործընթացի նախագծման, գործընթացի արդյունավետության և դաստիարակության գործընթացի սուբյեկտների ֆիզիկական կուլտուրայի ձևավորվածության մակարդակները ստուգող, հավաստող կազմակերպական, մեթոդական հետազոտություններ:

**Հետազոտության իրականացման փուլերը.**

Տեսական և գործնական հետազոտությունները կատարվել են 2009-2013 թթ. երեք փուլերով.

- առաջին՝ նախապատրաստական փուլում (2009-2010թթ.) ձևավորվել է հասկացությունների ապարատ, իրականացվել բնագավառի տեղեկույթի հավաքագրում, համակարգում, վերլուծվել մանկավարժական, հոգեբանական սկզբնաղբյուրներն ու տեսությունները, կառուցվել հետազոտությունների մեթոդաբանություն, մշակվել օբյեկտի նկարագրման փաստացի նյութեր, բացահայտվել ոլորտում առկա հակասությունները, հիմնախնդիրները, ձևակերպվել հետազոտության թեմա:
- Երկրորդ՝ նախագծման, իրականացման, պրոյեկտման և ներդրման այս փուլում (2010-2012թթ.) հաշվի առնելով միջին մասնագիտական կրթության առանձնահատկությունները, ներկայացվող պահանջները՝ մշակվել է ֆիզիկական դաստիարակության այլընտրանքային մոդել, բացահայտվել մշակված մոդելի իրատեսական լինելը 16-20 տարեկան երիտասարդների ֆիզիկական դաստիարակության իրականացման, նրանց առողջության պահպանման և ամրապնդման համար:

- Երրորդ՝ ընդհանրացնող փուլում (2012-2013թթ) կատարվել է փորձնական նյութի համակարգում, վերլուծում և ընդհանրացում, հետազոտական տեսական մեթոդաբանական հիմքի ճշգրտում, մշակված տեխնոլոգիաների ներդրում մասնագիտական ուսումնական հաստատություններում, ստացված արդյունքների վերլուծություն, մշակված դրույթների ներդրման արդյունքներով առաջարկությունների ներկայացում, եզրակացությունների և ատենախոսական հետազոտությունների ձևակերպում:

Ստացված արդյունքների և եզրակացությունների **հիմնավորվածությունն ու հավաստիությունը** ապահովված է աշխատանքի մեթոդաբանությամբ, իրականացված հարցումների արդյունքներով, հետազոտությունների մեթոդաբանական հիմքերի, մեթոդների, վարկածի, նպատակի, առաջադրված խնդիրների հիմնավորվածությամբ, հետազոտության տրամաբանական կառուցվածքով, մեթոդների կիրառմամբ, մանկավարժական գիտափորձի տևական բնույթով, վերլուծության արդյունքներով, եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորմամբ, ատենախոսության հիմնական դրույթների՝ կրթության նկատմամբ պետության հասարակության, ուսումնական հաստատությունների պահանջների և անձի պահանջմունքների համապատասխանությամբ:

Հետազոտության փորձաքննությունն իրականացվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի ընդհանուր մանկավարժության, մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոններում, ինչպես նաև հրապարակված գիտական հոդվածներում, գիտափորձի բազա հանդիսացած ուսումնական հաստատություններում:

**Հետազոտության գիտական նորոյթ:**

1. Բացահայտվել և հիմնավորվել են մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացում:
2. Մշակվել է ուսանողների ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացում արդյունավետություն ապահովող մանկավարժական մոդուլային տեխնոլոգիա՝ միջին մասնագիտական կրթության առանձնահատկությունների հաշվառմամբ:
3. Հիմնավորվել է մշակված տեխնոլոգիաների նպատակահարմարությունը ուսանողների ֆիզիկական կուլտուրայի դաստիարակություն յուրաքանչյուր փուլի (պլանավորում և նախագծում, դիագնոստիկա, մանկավարժական նպատակադրում, նախապատրաստական աշխատանքներ, տեխնոլոգիական հերթագայությունների մշակում, տեխնոլոգիական գործընթացի իրականացում, մշտադիտարկում, գործընթացի արդյունքների արժևորում և գնահատում, մանկավարժական շտկման պլանի կազմում) համար: Մշակվել են ուսանողների ֆիզիկական կուլտուրայի ձևավորման բացահայտման չափանիշներ:
4. Բացահայտվել է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների ֆիզիկական դաստիարակության հիմնախնդիրը, դասակարգվել են ֆիզիկական դաստիարակության ընդհանուր և հատուկ սկզբունքները, համակարգային մոտեցմամբ մշակվել ֆիզիկական կուլ-

տուրայի դաստիարակության մանկավարժական տեխնոլոգիական գործընթացի այլընտրանքային մոդել, գործնականում ստուգվել դրա արդյունավետությունը:

5. Հիմնավորվել է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դիդակտիկ համակարգի ձևավորումը որպես կրթադաստիարակչական գործընթացի առանձնահատկություններում արտահայտվող հիմնական գիտամեթոդական հիմնախնդիրների համալիր:

#### **Հետազոտության տեսական նշանակությունը.**

Դիտարկված են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների ֆիզիկական դաստիարակության մանկավարժական տեխնոլոգիաները, ֆիզիկական կուլտուրայի ձևավորվածության որոշման չափանիշները, տեխնոլոգիական հերթագայությունները, դրանց կիրառման արդյունավետությունը: Մանրամասն ներկայացված են ֆիզիկական դաստիարակության տեխնոլոգիաները, մեթոդները, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացում դրանց պրոյեկտման հնարավորությունները: Մշակվել են դիդակտիկ համակարգի իրացման նոր, ձևուն մոդուլային տեխնոլոգիա:

Ատենախոսության նյութերը կազմում են նորարարական մոտեցումների մշակման գիտական բազա, հարստացնում են պրոֆեսիոնալ ֆիզկուլտուրային կրթության տեսությունը: Ատենախոսության նյութերի պարունակած նորարարական տեխնոլոգիական գործընթացի հիմնավորումները ուղղված են ֆիզիկական դաստիարակության և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպմանն ու իրականացմանը: Նրանք լրացնում են ֆիզիկական դաստիարակության տեսությունն ու մեթոդիկան:

#### **Հետազոտության գործնական նշանակությունը.**

Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ֆիզիկական կուլտուրայի դաստիարակության և «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացում մանկավարժական տեխնոլոգիաները էականորեն բարձրացնում են ֆիզիկական կուլտուրայի ձևավորվածության մակարդակը: Մշակված տեխնոլոգիական հերթագայություններն ապահովում են ֆիզիկական դաստիարակության գործընթացի և միջոցառումների արդյունավետությունը: Բացահայտվել են ուսանողների առողջության ամրապնդման, ֆիզիկական ներդաշնակ զարգացման, մարմնի ճիշտ կեցվածքի ձևավորման, բարոյականային որակների դաստիարակման, ֆիզիկական պատրաստականության և բարձր աշխատունակության ապահովման գործընթացների արդյունավետության ապահովման մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները:

#### **Հետազոտության փորձաքննությունը.**

Հետազոտության ընթացքի և արդյունքների մասին զեկուցվել է ֆիզիկական կուլտուրայի պետական ինստիտուտի հանրապետական 37-րդ գիտամեթոդական գիտաժողովում, Խ.Արփյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնում, մշակված ֆիզիկական դաստիարակության այլընտրանքային մոդելը, տեխնոլոգիական հերթագայությունները փորձարկվել է Երևանի Օլիմպիական հերթափոխի և Երևանի Թեթև արդյունաբերության պետական քոլեջներում:

Կատարված հետազոտական աշխատանքների արդյունքները հրատարակվել են գիտական հանդեսներում:

**Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.**

1. Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացում ֆիզիկական դաստիարակության մանկավարժական տեխնոլոգիաների ներդրումը պայմանավորված է հասարակության և կրթության համակարգի զարգացումներով, և զարգացման միտումներով, ուսուցման գործընթացի տեխնոլոգիական բնույթով, գործընթացների առանձնահատկություններով ու բովանդակությամբ:
2. Միջին մասնագիտական կրթությանը ներկայացվող պահանջների և առանձնահատկությունների հաշվառմամբ ուսանողների ֆիզիկական դաստիարակության մանկավարժական տեխնոլոգիաներն ապահովում են գործընթացի արդյունավետությունը:
3. Ֆիզիկական դաստիարակության մշակված ուսուցման տեխնոլոգիական հերթագայությունները «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման ժամանակ բովանդակային և գործնական առումով էական առաջընթաց է արձանագրում ուսանողների ֆիզիկական դաստիարակության գործընթացում: Այն հաշվի է առնում «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի յուրահատկությունները, սովորողների տարիքային, հոգեբանական և անհատական առանձնահատկությունները, դասավանդման պայմանները, ապահովում ուսանողների ֆիզիկական զարգացման գործընթացի արգասաբերությունը:
4. «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման գործընթացում առաջարկվող մանկավարժական տեխնոլոգիաների մոդելը ֆիզիկական դաստիարակության գործընթացը դարձնում է իրատեսական, հստակեցնում է գործունեության սուբյեկտների նպատակներն ու դրդապատճառները, ամրապնդում նրանց առողջությունը, նպաստում առարկայի առաջադիմության բարձրացմանը:

**Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 159 էջ է: Աշխատանքը պարունակում է 8 աղյուսակ, 5 հավելված, գրականության ցանկը՝ 117 սկզբնաղբյուրներ և աշխատություններ:

Ներածական մասում հիմնավորված է հետազոտության արդիականությունը, օբյեկտն, առարկան, նպատակն ու խնդիրները, ներկայացված է հետազոտության վարկածը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության հիմնադրույթները:

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության առաջին՝ «Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների ֆիզիկական դաստիարակության տեսական և մեթոդաբանական հիմքերը» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Ուսանողների ֆիզիկական դաստիարակության մանկավարժական տեխնոլոգիաների նախագծման տեսական հիմունքները» ենթագլխում

ներկայացվում են ֆիզիկական դաստիարակության մանկավարժական տեխնոլոգիաները, ֆիզիկական դաստիարակության և ֆիզիկական զարգացման մանկավարժական տեխնոլոգիական գործընթացը, դրա փուլերը, տեխնոլոգիական հերթագայության ալգորիթմը, ֆիզիկական դաստիարակության ձևերը, Ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում օգտագործվող կազմակերպման ձևերը /Ճակատային, խմբային (ըստ բաժինների), հերթափոխային, շրջանաձև, հոսքային շրջանաձև, անհատական/:

Կարևորվում են լրացուցիչ պարապմունքները, որոնք կարող են լինել համալիր, մասնագիտացված, կոնկրետ մարզած:

Հանգամանորեն ներկայացված են նաև մասնագիտացված և ինքնուրույն պարապմունքները: Ֆիզիկական դաստիարակության պարապմունքներ կազմակերպելու համար պետք է հաշվի առնել ուսումնական ծրագրի պահանջները, առ այն, որ ամեն պարապմունք, որպես օրենք, պետք է կազմված լինի ոչ թե մեկ, այլ մի շարք փոխկապակցված բաղադրիչներից (շարժումների ուսուցում, հատուկ գիտելիքների փոխանցում և այլն): Պարապմունքները պետք է անցկացվեն բարձր հուզական մակարդակի վրա, պարապողների մոտ առաջացնեն բավարարվածության զգացում և ֆիզիկական վարժություններով պարբերաբար զբաղվելու ցանկություն:

Երկրորդ՝ **«Ֆիզիկական դաստիարակության գործընթացի ծրագրամեթոդական հիմնավորումը և իրականացման մոդուլային տեխնոլոգիան: Ֆիզիկական կրթության դասընթացի ծրագրային կառուցվածքը»** ենթաալիսում ներկայացվում և վերլուծվում են «Ֆիզիկական կրթություն» ուսումնական ծրագիրը, ուսումնական բաժանմունքներում ուսանողների բաշխման ցուցանիշները, հատուկ ուսումնական բաժանմունքում ֆիզիկական կրթության հիմնական գործառնությունները, ուսանողների պատրաստվածության և նրանց ֆիզիկական զարգացման տարբեր տեսակների կառուցվածքի կազմման սկզբունքը, ուսուցման գործընթացի մոդելների մի քանի տեսակներ, պատրաստվածության մոդուլի բաղադրիչները, առանձնացվում են ֆունկցիոնալ, ինտելեկտուալ, հոգևոր պատրաստվածության մոդուլները և դրանց խնդիրները: Հանգամանորեն ներկայացվում են ֆիզիկական զարգացման, ֆիզիկական և հոգեբանա-ֆիզիկական պատրաստվածության, ֆունկցիոնալ պատրաստվածության, հոգեբանական պատրաստվածության մոդուլները և ուսուցման մոդուլների խնդիրները: Ներկայացվում են սպորտային կատարելագործման բաժանմունքի ուսումնական խմբերը: Տեսական պարապմունքների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում բժշկական վերահսկման, ինքնավերահսկման և ֆիզիկական կրթության մեթոդիկայի հարցերին, հաշվի առնելով ուսանողների առողջական վիճակի շեղումները: Հստակեցված են ուսումնական գործընթացի գաղափարի դրույթներն ու պահանջները:

Երրորդ՝ **«Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների ֆիզիկական դաստիարակության էությունն ու կառուցվածքը»** ենթաալիսում ներկայացվում են ֆիզիկական կրթության առողջարարական գործառնությունները, ֆիզիկական կրթության ծրագրով նախատեսված ուսումնական պարապմունքների բաժինները, սպորտային խաղերը, դրանց տեսակները, գործառնությունները, մասնագիտական ֆիզիկական պատրաստվածության բովանդակությունը, սահմանավում է «Ֆիզիկական մարզվածություն» հասկացությունը, բացահայտվում է աշխատանքային շարժողական գործողությունների բնույթը մասնա-

գիտական գործունեության տարբեր ձևերում, ներկայացվում է ֆիզիկական պատրաստվածության ստուգման ու գնահատման համակարգը: Ֆիզիկական կրթության հիգիենայի հիմունքների իմացությունը կարևոր նշանակություն ունի ուսանողների առողջ ապրելակերպի կազմակերպման և ֆիզիկական դաստիարակությունը նրանց առօրյա ներմուծելու համար: Անձնական հիգիենայի կանոնների, սովորելու և հանգստի ռացիոնալ ռեժիմի պահպանումը, առօրյայում ֆիզիկական վարժություններով պարբերաբար զբաղվելը ֆիզիկական դաստիարակության ծրագրով նախատեսված խնդիրների հաջող լուծման պարտադիր պայմաններն են: Ձեռք բերված գիտելիքներն անհրաժեշտ է ամրապնդել գործնական պարապմունքներով, փոխկապակցել դրանք ընդհանուր հիգիենայի պահանջների հետ, որոնք ներկայացվում են ուսանողներին ուսումնական և աշխատանքային գործունեության ընթացքում: Այդ թեմայի տեսական գիտելիքները պետք է հաղորդել ուսանողներին ապագա մասնագիտության առանձնահատկություններին համապատասխան, և ամրագրել գործնական պարապմունքների միջոցով՝ ներգրավիչ մարմնամարզության և ֆիզկուլտ դադարի ժամանակ:

Այսպիսով, մասնագիտությունները տարբերվում են ըստ հոգեֆիզիոլոգիական բնութագրերի և աշխատանքի պայմանների, և, հետևաբար, մարդու ֆիզիկական պատրաստության նկատմամբ տարբեր պահանջներ են ներկայացնում:

Մանկավարժական գործունեության պահանջն իր արտացոլումն է գտել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների ֆիզիկական կրթության ծրագրում: Մասնագիտական ֆիզիկական պատրաստության բովանդակության մեջ մտնում է նաև այնպիսի հիմնական թեմաների տեսական նյութերի ուսումնասիրությունը, ինչպիսիք են՝ մասնագիտական ֆիզիկական պատրաստության էությունն ու խնդիրները, մասնագիտության յուրահատկություններն ու պահանջները ուսանողների ֆիզիկական, ինչպես նաև շարժողական որակների նկատմամբ, նախապատրաստման տվյալ տեսակի համար օգտագործվող կիրառական վարժությունների և սպորտաձևերի բնութագիրը, մասնագիտական ֆիզիկական պատրաստության կազմակերպումը, ուսումնական նորմատիվները:

Ըստ ֆիզիկական պատրաստության մասնագիտական ձևերի ուսանողների պատրաստության ստուգումն ու գնահատումն իրականացվում է հատուկ սահմանված նորմատիվների հիման վրա: Ընդ որում, ստուգողական վարժությունների ցանկը և նորմատիվների մեծությունները որոշվում են ուսանողների ֆիզիկական պատրաստության նկատմամբ կոնկրետ մասնագիտական գործունեության կողմից ներկայացվող օբյեկտիվ պահանջներով:

Ուսանողների կիրառական ֆիզիկական պատրաստության ուսումնական նորմատիվների մշակման ժամանակ անհրաժեշտ է առաջնորդվել քաղաքային և գյուղական տեխ-մասնագիտական ուսումնարանների ֆիզիկական կրթության ծրագրի մեթոդական ցուցումներով և պահանջներով:

Երկրորդ՝ **«Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների ֆիզիկական զարգացման արդի հիմնախնդիրները, չափանիշները և ֆիզիկական դաստիարակության սկզբունքները»** գլուխը բաղկացած է երկու ենթապլիֆց:

Երկրորդ գլխի առաջին՝ «Ուսանողների ֆիզիկական զարգացման օրինաչափություններն ու առանձնահատկությունները» ենթագլխում բացահայտվում են ֆիզիկական դաստիարակության գործոնները, հոգեբանական, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Նշվում է, շարժողական ընդունակությունների արագաշարժության, ուժի, ձկունության մակարդակի զարգացման նկատմամբ օրգանիզմի ֆիզիկական բեռնվածության հարմարվողականության մակարդակը կախված է օրգանիզմի տարիքային առանձնահատկություններից: Ապացուցվում է, որ ձկունության զարգացման համար բարենպաստ է մինչև 13 տարեկան ժամանակահատվածը, արագաշարժության և հավասարակշռության զարգացման համար՝ ցանկացած տարիք (մի փոքր բարենպաստ չէ 8-9 տարեկան հասակը), մկանային ուժի զարգացնելու համար՝ 8-12 և 14 ու ավելի բարձր տարիքները (արգելվում է 13 տարեկանում), դիմացկանության բարձր մակարդակի հասնելու համար՝ մինչև 8 տարեկան, 10 տարեկանում, 12 և ավել տարիքում (արգելվում է 9 և 11 տարեկանում):

Երկրորդ գլխի երկրորդ՝ «Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսանողների ֆիզիկական դաստիարակության սկզբունքները» ենթագլխում սահմանվում է «սկզբունք» հասկացությունը, դասակարգվում են ֆիզիկական դաստիարակության սկզբունքները, ներկայացվում են ընդհանուր սոցիալական ու ընդհանուր մանկավարժական սկզբունքները, որոնցից առանձնացվում են անընդհատության, բեռնվածության և հանգստի համակարգային հերթազայման, զարգացնող և մարզող ազդեցությունների աստիճանական ուժեղացման, բեռնվածության դինամիկայի ադապտատիվ կարգավորման, պարապմունքների կառուցման պարբերականության, ֆիզիկական դաստիարակության տարիքային համապատասխանության սկզբունքները:

Նշվում է, որ զարգացնող և մարզող ազդեցությունների աստիճանական ուժեղացման սկզբունքը նախատեսում է դեպի բարդացում առաջադրանքների բեռնվածության ծավալի և հաճախականության պլանավորված ավելացում և նորացում՝ օրգանիզմի գործառնային հնարավորությունների աճին համապատասխան:

Կարևոր եզրահանգում է այն, որ ֆիզիկական որակների մակարդակի զարգացման ու արագաշարժության, ուժի, ձկունության նկատմամբ օրգանիզմի ֆիզիկական բեռնվածության հարմարվողականության մակարդակը կախված է օրգանիզմի տարիքային առանձնահատկություններից:

Երրորդ՝ «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների ֆիզիկական ներդաշնակ զարգացման պայմանները և ֆիզիկական դաստիարակության արդի մանկավարժական տեխնոլոգիաները: Փորձարարական աշխատանքի վերլուծություն և արդյունքների ամփոփում» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին՝ «Ուսանողների ֆիզիկական դաստիարակության և ֆիզիկական ներդաշնակ զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները: Մանկավարժական նորարարական տեխնոլոգիաների հայեցակարգային հիմնավորումը» ենթագլուխը ներկայացնում է «տեխնոլոգիա» հասկացությունը: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ներկայումս պետք է իրականացվի մասնագիտական, առողջարարական, մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաների հիման վրա, որոնք հիմնվում են ուսուցման նոր մեթոդների տիրապետման և ֆիզիկական կրթության ուսումնական գործընթացի

համակարգչայնացման վրա: Այդ պատճառով արդիական է շրջանավարտների մասնագիտական հոգեֆիզիկական պատրաստության ապահովմամբ ֆիզիկական դաստիարակության դասավանդման տեխնոլոգիայի մշակումը: Այդ տեխնոլոգիան պետք է ապահովի մասնագետների նախապատրաստման համակարգային մոտեցումը՝ ֆիզիկական կրթության և սպորտային մարզումների տեսության և մեթոդիկայի ժամանակակից ձեռքբերումների հիման վրա, համապատասխանի գիտելիքների զարգացման ժամանակակից մակարդակին, ուսուցանվողների իրական կրթական խնդիրներին, հասարակության զարգացող պահանջներին:

Բացահայտվում է, որ քոլեջների շրջանավարտների մասնագիտացման գործընթացի կառավարման կազմակերպման հայեցակարգային սկզբունքների ձևավորման խնդիրը, ելնելով ոչ միայն մասնաճյուղի ժամանակակից վիճակի, այլև՝ դրա զարգացման հեռանկարների պահանջներից, կարող է լուծվել միայն մասնագետի անհատական որակների ողջ հավաքակազմի իրականացման դեպքում: Դա հիմք է ծառայում հետագա մասնագիտական ուսուցմանը և մասնագիտացմանն ըստ գործունեության որոշակի մոդելների: Այդպիսի մոդելները պետք է բավարար խտությամբ և զանազանությամբ արտացոլեն մասնագիտության բոլոր կողմերի ներքին կապերի կառուցվածքը:

